



ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ

ՄԵՐ ՅԱԶՈՐԻ ԹԻՒԸ՝
ՈՒՐԲԱՅ,
17 ԲՈԿՏԵՄԲԵՐ
2003

«ԱԶՊԱԿ»Ի ՄԱՆԿԱՊԱՏՄԱՆԵԿԱՆ ՅԱԽԵԼՈՒԱԾ

Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 6 (18) ՍԵՊՏԵՄԲԵՐ 2003 bezdlg_mezdlg@hotmail.com

ԻՆՆ ԱԼ ԱՐԺԷՔԱԽՈՐ Է

Ինն եւ նոր: Զոյգ մը հականիշ բառեր, որոնց իմաստին ճանօթ ենք մեր մանկութենէն: Սակայն ինչ որ հաւանաբար չենք մտածած, այն է, թէ իննը ժամանակին նոր եղած էր, իսկ այսօրուան նորը վաղը ինն պիտի ըլլայ:


Ճատեր կան, որոնք միայն նոր առարկաներ, հագուստներ, շինութիւններ, երգեր... կը սիրեն, իսկ շատեր ալ, նորը սիրելով հանդերձ, իննին ալ արժէք կու տան:

Գիտէք, լա՛ւ որ այս ինն առարկաները սիրողներ կան: Ինչո՞ւ:

Եթէ անոնք, որոնց հնազէտ, հնախոյզ անունները կու տանք, չըլլային, այսօր մենք ինչպէս կրնայինք գիտնալ, թէ Մեճն Տիգրան Քրիստոսէ առաջ իր անունով եւ դիմանկարով դրամ ուներ կամ հատել տուած էր: Եթէ այդ գտնուած ինն դրամները գտնէր այն անձը, որ ինն առարկաներ չի սիրեր, անպայման որ կա՛մ աղբաման պիտի նետէր եւ կամ ալ միայն մետաղ կարծելով պիտի հալեցնէր եւ նոր դրամ պիտի հատէր: Իսկ մենք տեղեակ պիտի չըլլայինք այդ դրամէն, պիտի չգիտնայինք նաեւ Տիգրանին դէմքը:

Եթէ այդ հնազէտներն ու հնախոյզները չըլլային, մենք ուրկէ պիտի գիտնայինք, թէ Պէյրուսի կեդրոնական շուկաներուն մէջ հռոմէական բաղնիք մը շինուած էր, որուն աւերակները անոնք գտած են: Ինչպէս պիտի գիտնայինք, թէ այդ ինն-ինն օրերուն, երբ ջեռույիչներ չկային, ցուրտ օրերուն մարդիկ ինչպէս տաք ջուրով կը լոգնային:

Դեռ չխօսիմ Գառնիի տաճարին, Էրեբունի քաղաքին, Պաալպէթի սիւներուն, Եգիպտոսի բուրգերուն եւ ուրիշ շատ հնութիւններու մասին, որոնք այսօր մեճ խնամքով կը պահուին պետութիւններու կողմէ:




Գոհար Արզարեան, 12 տարեկան

մէ, որովհետեւ անոնց միջոցով մենք կրնանք ինն մարդոց կեանքն ու պատմութիւնը գիտնալ: Կարելոր է ինն մարդոց պատմութիւնը գիտնալը:

Ճատ ապրին ինն առարկաներ սիրող, պահող եւ ուսումնասիրող անձերը:

27-28 ՕԳՈՍՏՈՍ. ԻՐԱՏ ԵՒ ԵՐԿՐԱԳՈՒՆԴ՝ ԻՐԱՐՈՒ ԾԱՏ ՄՕՏ



ملحق أزياءك



ԱՅՈՒՄՈՐ

Ի՞նչ ԱՃՈՒՐԻՆ ԳԱՊՏՆԻՔՆԵՐԸ ԲԱՅՈՂ ԳԻՏՈՒԹԻՒՆ ՄԸ

Բաւանարար այցելած էք թանգարաններ, ուր կան շատ հին դարերէ մեկի հասած քարէ, կաւէ եւ ապակիէ պնակեղէններ, պարզեղէններ, պէնքեր եւ այլն: Եւ կամ թերեւս տեսած էք բերդեր, յուշարձաններ, որոնք յայտնաբերուած են հարիւրաւոր տարիներ շարունակ հողի շերտերու տակ թաղուած մնալէ ետք:

Անոնք շատ բան կը պատմեն, թէ ժամանակի ընթացքին մարդիկ ի՞նչպէս ապրած են:

Իսկ բնաւ պարմացած էք, թէ հարիւրաւոր եւ հազարաւոր տարիներ առաջ գործածուած այս իրերը ուրկէ՞ հասած են մեկի: Այս

հնութիւնները ժամանակի փոշիին տակէն..կը հանեն գիտնականներ, որոնք կը կոչուին հնագէտներ:

Բնագիտութիւնը հին ժողովուրդներու կեանքին մասին տեղեկութիւններ կը հաւաքէ: Այս գիտութեան աշխատանքները կը կատարուին գետնի վրայ: Այսինքն հնագէտը շրջանի մը մէջ կը կատարէ փնտռութիւններ, որպէսզի գիտնայ, եթէ կարելիութիւն կայ հին քաղաքակրթութեան պատկանող հետքեր կամ հնութիւններ գտնելու: Ապա ան կը սկսի պեղումներու կամ գետինը փորելու աշխատանքին:

ԶՐՈՒՅԵՆՔ ԲՆԱԳԵՏԻՆ Ի՞ՆՉ

Վերջերս հնագիտական պեղումներ կատարելու համար Լիբանան կը գտնուէր հնագէտ կասիկ Յարութիւնեան: Անոր հետ ունեցանք այս հետաքրքրական զրոյցը.

Ի.- Ի՞նչ նշաններով կ'առաջնորդուի հնագէտը:

Պ.- Պատմութիւնը շատ կ'օգնէ հնագէտին գիտնալու, թէ այս վայրին մէջ շատ հին ժամանակ քաղաք մը կամ բերդ մը եղած է, թէ ոչ: Երկրորդ օգնականը արխիւներն են, որոնք պահուած կ'ըլլան պատմութեան գիրքերու կամ թանգարաններու մէջ: Երրորդը հետախույզական աշխատանքն է, զոր կարելի է կատարել այն շրջաններու մէջ, որոնց մասին շատ տեղեկութիւն չկայ: Այսինքն՝ ոտքով պտտիլ լեռները, դաշտերը, եւ գտնել հետքեր:

Ի.- Ի՞նչու պէտք է գիտնանք հին ժամանակներու կեանքին մասին:

Պ.- Ամէն մարդ միշտ կ'ուզէ գիտնալ, թէ ինք, իբրեւ մարդ եւ ժողովուրդ, ո՞ւրկէ եկած է: Ասոր համար կարեւոր է ճանօթ ըլլալ իր եւ ուրիշ ժողովուրդներու պատմութեան: Իսկ ուրկէ՞ գիտենք այս պատմութիւնը: Բացատրութիւնը այն է, որ արձանագրուած տեղեկութիւններուն կողքին, հնագէտները կը գտնեն եւ կը փաստեն, թէ ո՞ւր մեծ կամ փոքր քաղաք մը կար, անոր բնակիչները ի՞նչ տեսակ տուններու մէջ կ'ապրէին, ի՞նչ կ'աշխատէին, ինչ առարկաներ կը գործածէին...

Ի.- Ի՞նչպէս կ'աշխատի հնագէտ մը:

Պ.- Բնագէտին աշխատանքին մէջ կրնայ փորել ըլլալ, սակայն անկէ առաջ կան այլ աշխատանքներ: Ամէն անգամ որ հողին գոյնը փոխուի, քար մը կամ հետք մը գտնուի, հնագէտը կը կեցնէ փորելու աշխատանքը: Ան ունի իր տետրակը եւ իր փորելու քառակուսին: Ի՞նչ կը գրէ իր աշխատանքին նոյնիսկ ամէնէն փոքր արդիւնքը: Ապա կ'ուսումնասիրէ իր գտած հողի խաւերը, որպէսզի գիտնայ, թէ անոնք եւ հոնկէ ելած առարկաները պատմութեան ո՞ր շրջանին կը պատկանին:



Ի.- Ի՞նչ տեսակ անձ մը կրնայ հնագէտ ըլլալ:

Պ.- Բնագէտը պէտք է ըլլայ արկածախնդիր, հետաքրքիր, չարքաշ, սիրէ պատմութիւնը եւ տոկայ աշխատանքի դժուար պայմաններուն: Պէտք է մարմինը վարժեցնէ երկար ժամանակ քայլելու, լեռներ մագլցելու, արեւուն տակ աշխատելու: Իսկ ամէնէն կարեւորը, ան պէտք է կարենայ խումբին անդամներուն հետ հաշտ ապրիլ, որովհետեւ հաւաքական աշխատանքը շատ կարեւոր է:

Ի.- Ո՞րն է Լիբանանի հնագիտական ամէնէն հարուստ շրջանը:

Պ.- Թէեւ Լիբանանի մէջ շատ կան հնագիտական հարստութիւններ, սակայն ժպէլը ամէնէն յատուկ պարագան է: Ի՞նչ կարելի է գտնել նախապատմական շրջանէն մինչեւ միջնադարեան շրջանի տուններ, քարեր եւ բերդ: Լիբանանի այլ շրջաններուն մէջ եւս կան արժեքաւոր հնութիւններ, սակայն միայն ժպէլի մէջ կարելի է գտնել պատմական շրջաններու յաջորդականութիւնը:

ԵՍ Կ՛ՈՒԶԵՄ ԻՆԱԳԷՏ ԴԱՌՆԱԼ, ԽՆՉ ՍՈՐԿԻՄ

Բաական երկար է հնագետ դառնալ ու պոզիտիվ աշխատանքը: Ան համալսարանին մէջ կը սորվի հնագիտութիւն: Ան պէտք է գիտնայ պատմութիւն, երկրաբանութիւն, ծարտարապետութիւն եւ գաղափար ունենայ քարերու, բերդերու, դրամներու, կաւերու եւ հին պէնքերու մասին: Անշուշտ իւրաքանչիւր հնագետ կրնայ մասնագիտանալ իր սիրած նիւթին մէջ: Բնագետ մը կրնայ աշխատիլ միայն կաւէ ամաններու վրայ, ուրիշ մը՝ քարերու, հին գործիքներու եւ այլն: Դաշտերու, լեռներու եւ քարայրներու մէջ աշխատանքին կողքին, կան նաեւ գիտաաշխատանոցներու մէջ կատարուող աշխատանքները:

Ինագէտի Գործիքներ

- Վրձիւն Տը՝
Քարերէն Երոզ
Մաքրելու Խաւար
- Հագախէժէ Կողով Տը՝
Տողոց Կտրատող Պէտ
Խաւար
- Կտրիկ Տիւտի
Տը Կամ Բրիչ Տը
- Տաւրիւր Ա
Թուղթ՝ աղփապաւնքին
Կտրիկ Խանգրուանէի
արջաւազի խաւար

ԱՅՈՒՐԻՒՆ ԻՆԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՆՆԵՐՈՒՆ ՊԱՌԱՊԱՆՆԵՐ

Մշակոյթի, գիտութեան եւ դաստիարակութեան նուիրուած միջազգային ԵՈՒՆԵՍԿՕ կազմակերպութիւնը նաեւ ստանձնած է աշխարհի պատմական, բնութեան եւ հնագիտական կարեւոր վայրերը պահպանելու պարտականութիւնը: Ան ունի «Մշակութային ամենայն գանձ» անունով ցանկ մը, ուր տեղ գտած են աշխարհի բազմաթիւ երկիրներու մէջ գոյութիւն ունեցող եւ մարդկութեան մշակութային հարստութիւնը կազմող հնութիւններ, բերդեր, տաճարներ, անտառներ...

Ինտերնացիոնալ Է. թէ ԵՈՒՆԵՍԿՕ ինչպէս կը պաշտպանէ այս վայրերը: Կազմակերպութիւնը կը գիտակցի, թէ մշակութային այս ժառանգութիւնները ամբողջ մարդկութեան են եւ ոչ թէ միայն երկրի մը կամ անոր կառավարութեան սեփականութիւնը: Ինտերնացիոնալ երկրի կառավարութիւն ԵՈՒՆԵՍԿՕի «Մշակութային ամենայն գանձ» ցանկին մէջ անցած վայրերուն մէջ չի կրնար փոփոխութիւններ մտցնել՝ շէնք շինել, անտառներէն ծառ կտրել կամ ծամբայ կառուցել՝ առանց կազմակերպութեան արտօնութեան: Պետութիւնը նաեւ ԵՈՒՆԵՍԿՕի օգնութեամբ պարտաւոր է հոգ տանիլ այս վայրերուն, որպէսզի անոնք չփճանան:

Գիտէ՞ք, թէ ԵՈՒՆԵՍԿՕի «Մշակութային ամենայն գանձ» ու ցանկին վրայ կան 754 վայրերու անուններ, որոնց թիւը միշտ կ'աւելնայ: Անոնց շարքին են նաեւ Բայաստանէն ու Լիբանանէն մշակութային եւ հնագիտական արժէք ունեցող բազմաթիւ վայրեր, ինչպէս՝ Բայաստանի Գեղարդ վանքը եւ Լիբանանի Մայրիներու անտառը:

ՍՈՏԵՐՈՅԻ «ԴԵՂԻՆ ԶԵՆՔ»

Երբ Սոտեքօ շրջանէն անցնինք, անպայման կը նշմարենք կէս աւերակ «Դեղին շէնք»ը:

1920ին շինուած եւ նաեւ «Պարաքաթ» անունով ճանչցուած այս շէնքը Լիբանանի քաղաքայիական պատերազմի օրերուն եղած էր փնտախներու կեդրոն: Ան ճանրօրէն վնասուած է ռումբերու պատճառով:

Վերջերս որոշուեցաւ շէնքը նորոգել եւ կայն վերածել Պէրլի մշակութային հարստութեան յատկացուած թանգարանի:



ՄԵՆՔ ԱԼ ԻՈՂ ՏԱՆԻՔ...

Յաճախ վթուաշրջիկներ անուշադիր կը վարուին իրենց այցելած հնագիտական վայրին մէջ: Երբ կ'այցելենք հոն, պէտք չէ դպչինք առարկաներուն, նոյնիսկ՝ քարերուն, եւ նստինք կամ կոխենք անոնց վրայ: Մանաւանդ պէտք չէ իբրեւ յիշատակ քարի կտոր մը տուն տանինք:

Ճիշդ է՝ հնագիտական վայրերը շատ հին են, սակայն անոնք կարելի է մեր պատմութեան համար:



ԱՅՆԱՅԻՆ

ՆԵՖԵՐՅԻՅԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ


Արդեօք Լուսորեն գտնուած վմռուած մոմիան կը պատկանի փարաւոններու նշանաւոր Նեֆերթիթի թագուհիին:

Գիտնականները կրցած են համակարգիչի օգնութեամբ վերակազմել այդ վմռուած մարմինն դէմքը: Ան շատ կը նմանի մեզի հասած եւ Պերլինի թանգարանին մէջ ցուցադրուող Նեֆերթիթի դիմաքանդակին:

Նեֆերթիթի, որուն անունը կը նշանակէ «գեղեցիկ կինը եղած է», սովորական թագուհի մը չէ եղած: Ան իր ամուսինին՝ Ախենատոն փարաւոնին հետ միասին ղեկավարած է եգիպտոսը եւ փորձած է ժողովուրդին պարտադրել մէկ աստուծոյ՝ արեւի պաշտամունքը:

Սակայն գիտնականներ տակաւին կը վիճին, թէ մոմիան իսկապէս Նեֆերթիթի կը պատկանի, թէ ոչ: Բազմաթիւ քննութիւններ կատարելէ ետք եգիպտական ճոռն ֆլեյշըր կը հաւատայ, թէ Լուսորի մէջ գտնուած մոմիան կը պատկանի Նեֆերթիթի, որովհետեւ հին եգիպտոսի մէջ գոյութիւն ունէին միայն երկու կիներ, որոնց ականջները երկու ձակ ունէին: Միւս կողմէ, եգիպտացի հնագէտ Ջանի հաուաս կը բացատրէ, թէ թագուհիները սովորութիւն ունէին իրենց օղերը անցընել կեղծամներուն մէջ եւ ոչ՝ ականջներուն վրայ: Ան նաեւ կ'ըսէ, թէ գտնուած մարմինը այդ մարդու մը մարմինն է եւ ոչ՝ Նեֆերթիթի նման վեց վաւակ ունեցող կնոջ մը:

Նեֆերթիթի առեղծուածը կը շարունակուի...



ԿՈՐՍՈՒԱԾ ԲՈՅԱՄՈՂԷՋԸ



Աստրալիոյ Նիւքեյլ Ռիճընըլ թանգարանէն գողցուած է 110 միլիոն տարեկան... հոյամողէպի մը կմախքը:

60 սմ. երկարութեամբ այս բրածոն նիւթական մեծ արժէք չունի, սակայն գիտական գետնի վրայ շատ թանկագին եւ կարեւոր է: Թութակի նման կտուց մը ունեցող այս հոյամողէպին բրածոյէն աշխարհի վրայ կայ միայն վեց օրինակ եւս: Այս հոյամողէպը «թոռն» էր հսկայ բուսակեր թրիսերաթոփսին:

Այս գողութիւնը բաւական տխուր պատահար մըն է թանգարանին համար, մանաւանդ որ ցուցադրուած կմախքը մաս կը կազմէր Չինաստանի կողմէ թանգարանին փոխ տրուած հաւաքածոյի մը:

ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ՆՈՐՈՅԹ

Մարդ արարածը երբ սկսած է հագուստ հագնիլ:

Այս հարցումին պատասխանը գիտնականները գտած են... ոջիւներու միջոցով:

Գիտնալով, որ ոջիլը միայն քանի մը ժամ կրնայ մարմնէն հեռու ապրիլ, գիտնականները ենթադրած են, թէ մարմնի ոջիլը իր վարմիկէն՝ գլխու ոջիլէն սկսած է բաժնուիլ, երբ մարդը սկսած է հագուստ հագնիլ, որովհետեւ մարմնի ոջիլը կրնայ ապրիլ հագուստին ճալքերուն մէջ:

Բետեւաբար ոջիլներու երկու տեսակներուն բաժնուելուն թուականը գտնելով՝ յայտնի եղած է, թէ մարդը սկսած է հագուստ հագնիլ 70,000-42,000 տարի առաջ:

ԱՋԹԵՔՆԵՐՈՒՆ ՈՍԿԻՆ

Բոլորին ճանօթ է Մեքսիքայի բնիկներուն՝ ալթեքներուն կայսրութիւնը: Անիկա կործանեցաւ 1500ական թուականներուն, երբ սպանացիները գրաւեցին երկիրը:

Գիտէիք, թէ Սպանիոյ Քարլոս 5րդ թագաւորը ալթեքներու վերջին թագաւորին՝ Մոնթեպումա 2րդի աղջկան եւ անոր ժառանգորդներուն խոստացած էր թոշակ մը վճարել: Թոշակը իւրաքանչիւր անձի համար տարեկան 90 հալար ամերիկեան տոլարի արժէքով ոսկի էր:

1550 թուականէն վճարուած այս թոշակը կը դադրի 1934ին:

Իսկ հիմա, Մոնթեպումայի վերջին ժառանգորդը՝ կիերմօ Արոսթա, կը մտածէ դատ բանալ Մեքսիքայի կառավարութեան դէմ՝ իր ընտանիքին իրաւունքները եւ իր բաժին դրամը ստանալու համար:



ԱՊՐԵՍՏԱՍԿԱՆ

ՋՈՒՏ ՏՈՒՐԱՐ՝ ԱՌԵԼԻ ՕԳՏԱԿԱՐ

Լսած ենք չափաւոր տուրմ ուտելու օգտակարութիւններուն մասին, սակայն, ըստ վերջին ուսումնասիրութիւններուն, բոլոր տեսակի տուրմերը չէ, որ օգտակար են:

Սնունդի մասնագէտներ փաստած են, թէ քաքառոյի հատիկները կը պարունակեն քիմիական նիւթեր, որոնք օգտակար են արեան շրջագայութեան համար: Եւրոպայի մասնագէտներ վերջերս փաստած են, թէ քաքառոյի օգտակարութիւնը կը պակսի, երբ ան կը խառնուի կաթնեղէններով, որովհետեւ կաթի ընտանիքին մէջ գտնուող նիւթեր արգելք կը դառնան, որ մարմինը օգտուի տուրմին նիւթերէն: Այսինքն՝ երբ տուրմը կաթին խառնելով խմենք, անիկա նոյն օգտակարութիւնը չ'ունենար մեր մարմնին համար:

Բետաքրթրական է, որ այս նորութենէն լուր չունին տուրմի սիրահար ֆրանսացիները: Անոնք վերջերս արտօնեցին, որ տուրմին մէջ պակսեցնեն քաքառն եւ աւելցնեն... կաթը: Բարեբախտաբար տուրմի ճրարներուն վրայ յստակօրէն պիտի գրուի անոնց բաղադրութիւնը: Կը մնայ ուշադիր ըլլալ:

ՔԱՔԱՐՈՅԻ ԵՒ ՏՈՒՐՄԻ ՄԱՍԻՆ

- Քաքառն 5-8 մեթր բարձրութեամբ ճառ մըն է, որ կ'աճի Ամերիկա-



յի արեւադարձային շրջաններուն մէջ:

- Մեքսիքայի բնիկները՝ ալթեքները քաքառոյի հատիկները գործածած են իբրեւ «դրամ»:

- Մեր ճաշակած տուրմը կ'արտադրուի խարկուած եւ կեղուրուած քաքառոյի հատիկները ճզմել եւ շաղել ետք:

- Սուրճին եւ թէյին նման հեղուկ տուրմ հրամցնելը եղած է բարի գալուստի նշան: Կ'ըսուի, թէ ալթեքներու Մոնթեպուլմա կայսրը իր ոսկի բաժակով միայն հեղուկ տուրմ կը խմէր:



ԱՍՏԻՆ

ԼՈՒՐԵՐ

★ Կիրանանցի բեմադրիչ Ռանտա Ճահապ Սապաղ Վենետիկի փառատօնին շահեցաւ «Արձաթեայ առիւծ» մրցանակը: Անոր «Թռուցիկ» ժապաւէնը կը ներկայացնէ Պաղեստին-Իսրայէլ տագնապին մէջ սիրոյ պատմութիւն մը:

Իրաքի քիւրտ բեմադրիչ Ռինըր Սալէմի «Վոտքա Լեմոն» ժապաւէնը տիրացաւ լաւագոյն ժապաւէնի՝ «Սան Մարքո» ժապաւէնի մրցանակին: Կարելոր է, որ այս ժապաւէնը պատրաստուած է հայաստանի մէջ:



★ Լոս Անճելըսի մէջ 81 տարեկանին մահացաւ նշանաւոր դերասան Չարլզ Պրոնսըն:

Իր ընտանիքին տասնհինգ զաւակներէն տասնմէկերորդը՝ Չարլզ իր հօր նման սկիզբը աշխատած է հանքերու մէջ: Անոր բախտը ժպտեցաւ 1950ական թուականներուն, երբ ան թատրոնի բեմայարդարողի օգնական ըլլալէ ետք դարձաւ դերասան: Անոր կարելոր ժապաւէններէն են՝ «Տը կրէթ ըսթլիփ», «Մէկնիֆիսընթ սեւըն», «Տը տըրթի տապըն» եւ ուրիշներ:



ՄԱՐԶԱԿԱՆ

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

16-24 Օգոստոսին Երեւանի մէջ տեղի ունեցան համահայկական 3րդ խաղերը: Մրցումներուն մասնակցեցան 31 երկիրներ (81 քաղաքներ) եկած




շուրջ 3000 հայ մարզիկներ, որոնցմէ 1362ը Երեւան հասաւ Սփիւռքի տարբեր վայրերէն:

Խաղերու աւարտին Երեւան գրաւեց առաջին դիրքը:

7 Սեպտեմբերին տեղի ունեցաւ թենիսի եւ. եւ. Օփըն մրցաշարքը: Տղոց մէջ առաջին դիրքը գրաւեց սպանացի Խուան Քարլոս Ֆերերօ, որ հանդիսացաւ տղոց աշխարհի ընդհանուր դասաւորման առաջինը: Աղջիկներուն մէջ ախոյեան հանդիսացաւ պելճիքացի Ժիւսթին Բենէն:

Փարիզի մէջ Օգոստոսին տեղի ունեցաւ աթլետիկայի աշխարհի ախոյեանութիւնը: Մրցումները աւարտեցան Միացեալ Նահանգներու յաղթանակով (20 մետալ, որոնցմէ 10՝ ոսկի): Բետաքրթրական էր 22 տարեկան աֆղան Լիմա Ալիմիի ներկայութիւնը: Ան առաջին աֆղանն է, որ մասնակցեցաւ աթլետիկայի ախոյեանութեան:

Ձեր գրութիւնները կամ նամակները կրնաք ուղարկել՝ bezdig_mezdig@hotmail.com կամ յանձնել՝ «ՊՋՏԻԿ-ՄՋՏԻԿ»-ի խմբագրութեան, «ԱԶԳԱԿ» «Ճաղպոյեան» կեղորուն



ՁՈՒՄՆԵՐ

ԻՆՆ ԿԵԱՆՔԻՆ ՄԱՍԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

Ինն ժամանակներու մարդոց կեանքին ուսումնասիրութիւնը առիթ կու տայ, որ այսօր մենք գիտնանք, թէ մեզմէ հազարաւոր տարիներ առաջ ապրած մարդիկը ինչպէս ապրած են իրենց կեանքը: Սակայն գիտէ՞ք, թէ նոյնքան կարելոր է գիտնալ նաեւ, թէ ինն ժամանակներուն մարդիկ ինչ բաներու կը հաւատային, գեղեցկութիւնը եւ ուժը ինչպէս կը նկարագրէին, իրենց պայտուսները ինչ ձեւերով կ'արտայայտէին, կամ՝ ինչ արեւտներ ունէին:

Բոլոր ժողովուրդները ունին իրենց կեանքին կանուխ ժամանակներուն մասին խօսող պատմութիւններ, որոնց մեծ մասը մեզի հասած է նախ բերանացի կերպով պատմուելով եւ յետոյ միայն գրի առնուած է ու վերածուած է գիրքի: Օրինակ, հայոց պատմութենէն յիշենք Արա Գեղեցիկի պատմութիւնը: Այս պատմութեան շնորհիւ կը գիտնանք հազարաւոր տարիներ առաջ հայերուն ապրած կեանքին, հաւատացած աստուածներուն, թշնամիներուն եւ պատերազմի

ատեն գործածուած վէճերուն մասին:

Մեզի հասած ամէնէն ինն գրական գործերէն են յոյն բանաստեղծ Բոմբրոսի «Իլիական» եւ «Ոդիսական» վէպերը: Ոտանաւորի ձեւով գրուած այս երկար պատմութիւնները մինչեւ մեր օրերը կը հասցնեն շուրջ երեք հազար տարի առաջ պատահած պատմական դէպքեր եւ հերոսներ:

«Իլիական»ի մէջ կը պատմուի Բոմբրոսի ճանօթ Տրոյլադայի պատերազմը: Գեղեցիկ եւ առեւանգուած Բեյլէն թագուհիին համար մղուած եւ տասը տարի տեւած այս պատերազմին պատմութեան ընթացքին կը հանդիպինք նշանաւոր հերոսներու, ինչպէս՝ Աքիլլէսին: Ինչպէս գիտէք, պատերազմը կ'աւարտի նշանաւոր փայտէ հսկայ ձիուն պատմութեամբ:

«Ոդիսական»ի մէջ պատերազմին յաղթական թագաւորներէն Ոդիսեւս կը փորձէ տուն վերադառնալ, սակայն աստուածները վայն կը պատժեն... Տասը տարի ետք է, որ ան կը յաջողի տուն հասնիլ: Ոդիսեւս շատ խելացի եւ խորամանկ է: Ճատ հետաքրքրական է գիտնալ, թէ ան ինչպէս կը յաջողի խուսափիլ եւ փրկուիլ իրեն դէմ լարուած թակարդներէն եւ վտանգներէն: Անոր արկածախնդրութիւններուն հերոսներն են՝ աստուածներ եւ աստուածուհիներ, հսկաներ, զօրաւոր նաւաստիներ եւ առասպելական էակներ...



ՁԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԳՈՐԾԻՔ

Վերջ դնելու համար Տրոյլադա քաղաքին դէմ յոյն թագաւորներու տասը տարի տեւած պատերազմին, խորամանկ Ոդիսեւս կը մտածէ խաբեքայութեամբ յաղթել թշնամիներուն: Յոյները կը յայտարարեն, թէ իրենք կը քաջուին պատերազմի դաշտէն եւ, իբրեւ հաշտութեան նշան, տրոյլադայիներուն նուէր կը դրկեն փայտէ հսկայ եւ գեղեցիկ ձի մը:

Տրոյլադայիները մեծ ուրախութեամբ կը դիմաւորեն պատերազմին աւարտը եւ նուէրը: Անոնք կը սկսին մինչեւ ուշ գիշեր տեւող խնձոյթի մը: Գիշերը, երբ տրոյլադայի վիճուորները գինոված կը քնանան, ձիուն փորէն դուրս կու գան... յոյն վիճուորներ եւ կը սպաննեն իրենց թշնամիները:

Տրոյլադայի ձիւն վերջ կը դնէ երկու կողմի հսկաներուն անվերջանալի պատերազմին:

ՌԿ Է ԲՈՍԵՐՈՍ



Գիտէ՞ք, թէ մինչեւ այսօր տակաւին յստակ չէ, թէ ճիշդ ո՞վ է Բոմբրոս: Գրականութեան այս հանելուկը մեծ թիւով ուսումնասիրութիւններու պատճառ դարձած է: Մինչեւ հիմա յունական եօթը քաղաքներ յայտարարած են, թէ այս բանաստեղծին հայրենիքն են: Կարգ մը գիտնականներ կ'ըսեն, թէ ան եղած է կոյր աշուղ մը, իսկ ուրիշներ կը պնդեն, թէ «Իլիական»ն ու «Ոդիսական»ը չեն գրուած մէկ գրողի կողմէ, այլ՝ բազմաթիւ գրողներու: Եղած են յայտարարողներ, թէ ան կրնայ նոյնիսկ կին բանաստեղծ մը ըլլալ:

«Իլիական»ի եւ «Ոդիսական»ի մէջ կը հանդիպինք ինն մարդոց կեանքին մասին հետաքրքրական տեղեկութիւններու: Այսպէս, կը գիտնանք, թէ թագաւորները եւ իշխանները ինչպէս կ'ապրէին ու կը դեկավարէին իրենց երկիրը, անոնք ինչ աստուածներու կը հաւատային, անոնց պալատները, իսկ պարզ ժողովուրդին տուները ինչ ձեւ ունէին, մարդիկ իրենց ազատ ժամանակը ինչպէս կ'անցընէին...

Այս բոլորը պատկերուած են նաեւ ինն յունական սափորներու վրայ:



ՀՈՒՆՏԱՆ

ՄԻՋ -

ՓՈՔՐԻԿ ԸՆԹԵՆՑՈՒՆԵՐԸ ԿՐ ԳՐԵՆ

Նախակրթարանի առաջին դասարանի աշակերտ Սեակ Թաշճեան (Ս. Յակոբ վարժարանէն, Մոնրէալ, Քանատա), դպրոցին տարեգիրքին մէջ հետեւեալը կը գրէ «Պպտիկ-Մպտիկ»-ին մասին.

««Պպտիկ-Մպտիկ»ը իմ սիրած թերթս է: Ան պպտիկներուն համար է: Մէջը կան շատ պատմութիւններ, խաղեր եւ պատկերներ: Թերթին վրայ գտնած է Պպտիկ-Մպտիկ անունով մուկ մը. որ բարեւ կ'ըսէ: Այս թերթը Լիբանանէն կու գայ»:



Յովսէփ Անրունեան, 11 տարեկան



Մանօ Թոքմարճեան, 12 տարեկան



Նայիրի Թօփալեան, 7. կարգ



Յակոբ Էթիպեան

★ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ★

Բոլոր այն աշակերտները, որոնք կը փափաքին գձագրութիւններ դրկել «ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»-ին, որպէսզի կարելի ըլլայ նկարը ամբողջութեամբ արտատպել, թող հաճին նկատի ունենալ առաւելագոյնը հետեւեալ չափը.

29,5 cm x 21 cm: